ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-1/1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2013թ-ի հունիսի 17-ին կնքված ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-1/1 պայմանագրում 2014թ-ի հունիսի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: 2014 թվականին պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսվել է հատկացնել կանխավճար:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար 2014 թվականին նախատեսվել է կանխավճարի հատկացում, այդ նպատակով 30.06.2014թ. կնքվել է համաձայնագիր և փոփոխություն է կատարվել Պայմանագրի 5.1.2-րդ կետում, որը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսվել է հատկացնել կանխավճար:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 544 626:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նախարարություն**

Համաձայնագիր-2
17.06.13թ. կնքված N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-1/1 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «30» հունիսի 2014թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի մի կողմից, և «Սահակյանշին» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս ընկերության տնօրեն Ս.Սահակյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 17.06.13թ. կնքված N ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-1/1 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.4-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կողմերը որոշեցին փոփոխել Պայմանագրի 5.1.2 կետը և հաստատել նոր խմբագրությամբ՝ 2014թ. հունիսի 30-ի դրությամբ Կողմերը փաստագրում և կազմում են արձանագրություն՝ տվյալ օրվա դրությամբ չկատարված աշխատանքների ծավալների մասին: Սույն կետով նախատեսված արձանագրությամբ սահմանված՝ չկատարված աշխատանքների գումարից մինչև 400 000 000(չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամը Կապալառուին վճարվում է կանխավճարի ձևով՝ Կապալառուի կողմից կանխավճարի ապահովում ներկայացնելու դեպքում: Ընդ որում Կապալառուն կանխավճարի ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է մինչև 2014թ. հուլիսի 10-ը: Սույն կետի հիման վրա հատկացված կանխավճարը մարվում է արձանագրությունների հիման վրա:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատվիրատու	Կապալառու
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Սահակյանշին» ՓԲԸ
ք. Երևան, Մ.Աղամյան-1	ք.Երևան, Արարատյան-117/1
ՀՀ ֆինանսների նախարարության	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900013574018, 900013202016	Հ/Հ 1150000169370100
ՀՎՀՀ 02591206	ՀՎՀՀ 02224769
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝	«Սահակյանշին» ՓԲԸ-ի տնօրեն՝
Ա.Արզումանյան	Ս.Սահակյան
(ստորագրություն)	(ստորագրություն)